Ալեքսանդր Շիրվանզադե

Մաղթանքներ

Շնորհավոր նոր տարի, ցանկանում եմ և մաղթում՝

Տանկահայերին. Հովո երանելու համբերություն:

Ռուսահայերին. Մի մսխալ մարդկային զգացում:

Պարսկահայերին. Անշավիղ «Շավիղներից» և խաչագողներից փրկություն:

Հայ եկեղեցուն. Մի խարազանահար Բարդուղիմեոս և Աշգեան էֆենդիների համար:

Հայ գրականությանը. Մի միջոց մղդսիներից և տիրացուներից ազատվելու:

Հայ հեղինակներին. Աստված փրկե և ազատե ձեզ Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունից:

Հայ թատրոնին. Մաքրություն ապականված բեմի:

Նոր թատրոնին. Նոր ճաշակ:

Հայուհյանց բարեգործական ընկերության. Մի մեծ կապոց չթի և քիսայի կապաների, սպիտակ ժիլետների և հարդյա գլխարկների՝ ձմեռվա ցրտերին, ձյունին և բուքին տաճկահայերին բաժանելու համար: Նաև մի պերճախոս խոհարար, որ քաղցած և կիսամերկ հայ կանանց բացատրե պաղպաղակ, կրեմ, պլոմբիր, տորտ, կեգս և այլ անուշահամ ուտելիքներ պատրաստելու եղանակը:

Կովկասյան բարեգործական ընկերության խորհրդին. Մի քանի миллионер անդամներ, որ գաղթականների օգտին չնվիրեն իրենց մի ժամվա եկամուտը... Երկու հարյուր ռուբլի:

Հրատարակչական ընկերության անդամներին. Ազատվել ընկերության գրասենյակից շարունակ Պոտապենկո, Իվանենկո, Անիշչենկո, Գրիշենկո, Տիշշենկո և Սիշշենկո և այլ այսպիսի երևելի հեղինակների գրվածները ստանալուց:

Հրատարակչական ընկերության խմբագրական մասնաճյուղին. Մղդսիներից ազատություն, մի քիչ հայերեն լեզու, մի մազաչափ գրականական ճաշակ...

Նույն ընկերության վարչությանը. Նոր տարվա համար նոր պրոգրամ՝ հայ հեղինակներին առաջ հարստահարելու, հետո զրպարտելու:

«Մուրճին». Մի ծանր հարված այժմյան «Մշակի» քաչալ գլխին:

«НОВОЕ ОБОЗРЕНИЕ»-ին. Պակաս համլետություն և մի քիչ էլ դոնքիշոտություն:

«КАВКАЗЪ»-ին. Խոնելիի պես վայրահաչներից զերծ մնալ...

«Արձագանքին». Մի խելացի փաստաբան, որ իր դատը «Տարազի» դեմ 73 % տանուլ չտա:

«Մշակին». Մի բուռն յուղ կոկորդին քսելու, որ «Տարազի» դառը պիլուլները կուլ տա և լռե...

Նույն լրագրի սրբագրիչին. Մի ամսան ձրի փլավ:

Նույն լրագրի մի աշխատակցին. Նոր երես նոր թատրոնի համար:

Նույն լրագրի нето-ից զուրկ խմբագրին. Տես հրատրակչական ընկերության վարչության զրպարտիչ նախագահին:

Հրատարակչական ընկերության վարչության գրպարտիչ նախագահին. Տես «Գյուղատնտեսական ընկերության չաչանակին»:

Չաչանակին. Տես մածնա-պանրային օրգանի խմբագրին:

Մածնա-պանրային օրգանի խմբագրին. Տես «Ժպտուն չինովնիկին»: Ժպտուն չինովնիկին. Տես հայուհյաց ընկերության խոհարարին:

Հայուհյաց ընկերության խոհարարին. Տես նորագույն թամադային:

Նորագույն թամադային. Տես «Ալեքսանդր Քալանթարին»:

Ալեքսանդր Քալանթարին. Տես ամեն տեղ, ուր կա մեղր ու եղ:

Վերջապես յոթերեսանի Յանուսին. Նվիրում եմ մի օրինակ Մոլիերի «Տարտյուֆ»-ից: